

ցի, գիտական շարադրումը, ընդհատակյա բուլ-շիկյան կազմակերպությունների զործունեության լուսաբանումը սկզբունքային նշանակություն ունի:

ՍԽԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի կուլեկտիվի առաջնահերթ խնդիրն է՝ ապահովել մարքսիզմ-լենինիզմի կլասիկների և բերքի բարձրորակ թարգմանությունն ու հրատարակությունը, ստեղծել Հայաստանի ռեյտինգի շարժումնե-

րի և Կոմունիստական պարտիայի պատմությանը նվիրված լիարժեք, տեսական-քաղաքական բարձր զաղափարականությամբ հագեցված «Ուրվագծեր» և գիտական այլ աշխատություններ:

Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԿՊ Կենտկոմին կից Պարտիայի պատմության ինստիտուտի—ՍԽԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի գերեկտոր

ԳԵՎԵՐԳ ՍԽՎԵՐԳՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՆՈՒ ԷԶԵՐԻՅ

Հայկական ՍՍԽ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում պահվում է անցյալ դարի 50-ական թվականների նշանավոր գեմքերից մեկի՝ բժշկ. բանահավաք ու բանասեր, Սայաթ-Նովայի ևր-կերի առաջին հրատարակիչ Գևորգ Ախվերդյանի թվով ոչ մեծ, սակայն նյութերի բազմազանությամբ ու տեսակներով հարուստ գրական ժառանգությունը: Իր ձևերով գրած ու արտագրած հայ կյանքին ու մշակույթին վերաբերող բազմաթիվ ձևերով ձևադիր նմուշներ, քաղվածքներ ու մտքեր, Խոբեհանցուց մինչև իր օրերի պատմիչների մասին տեղեկություններ, գրի առած առակներ ու ասացվածքներ, լեզվաբանական ժողովրդական ավանդություններ, հարուստ ու տաղանդավոր չուսումնասիրված և մասամբ էլ անտիպ աշուղական տաղեր, նամականեր, որոնք այնքան շատ բան են պատմում մեր անցյալի մասին:

Անցյալ դարի 40-ական թվականների սկզբներին ավարտելով Մոսկվայի կայսերական համալսարանի բժշկական ֆակուլտետը, Ախվերդյանը վերադառնում է հայրենիք՝ Թիֆլիս: Այստեղ նա բժշկի պարտականությունների հետ միաժամանակ սկսում է հետաքրքրվել ու զբաղվել հայ ժողովրդի պատմությամբ: «Կույի մեքանի տաբի հավաքում էմ կենդանի աղբյուրից հանած կենդանի նյութեր ժամանակակից հայ ազգի պատմության համար»,— գրում է նա Սայաթ-Նովայի գրքի առաջաբանում: Այդ նպատակով նա հավաքել և ուսումնասիրել է հայ և օտարազգի պատմիչներին: Ավելին, կապ է հաստատել լազարյան ճեմարանի, Էջմիածնի, Թիֆլիսյան Էնֆիաճյան եղբայրների ձևազարդումների հետ ու օգտվել նրանց նյութերից: Արխիվում պահվող պատմական արժեք ներկայացնող նյութերից երևում է, որ նա ցանկացել է գրել ինչպես հայ եկեղեցու, այնպես էլ հայ ժողովրդի պատմությունը: Էնֆիաճյանի ասելով

Ախվերդյանը նայել է և մանրադնին ուսումնասիրել Կովկասի փոխարքա Վորոնցովի գիվանտանը և դաժ՝ հայ ժողովրդին ու եկեղեցուն վերաբերող բոլոր թղթերը: Ուսումնասիրել է նույն գիվանտանը պահվող լեզական գիվանները՝ հայ զաղթականներից մնացած պատմական հիշատակներ դանելու հույսով: Ավելին, ինչպես նամականից պարզվում է, նա նույնիսկ հին վավերագրեր է գնել: Այսպիսով, Ախվերդյանի մոտ հավաքվել է պատմական արժեք ներկայացնող վավերականների մի հավաքածու:

Այդ հավաքածուի ուղարկության արժանի փաստաթղթերից է Թուրինի «Եռալի» թերթից թարգմանված Լևոն Լուսինյանի «Հրաբերական» ուղղված նապոլեոն III-ին Ըստ այդ «Հրաբերականի» կեղծ իշխան իբր 1861 թվականին եղել է Կիլիկիայում, հանրագրեր է կազմել ղեկավարների ստորագրությամբ: Սակայն էլ ավելի ուղարկավ է Ախվերդյանի «Թիֆլիսի համարները» ռուսերեն լեզվով գրած մեծածավալ աշխատությունը, որը խիստ կրճատմանը լույս տեսավ իր մահից 21 տարի հետո, 1882 թ. «Юридическое обозрение» ռուսական թերթում, ապա երկրորդ անգամ 1883 թ. առանձին հրատարակությամբ, դարձյալ մեծ կրճատումներով:

Ախվերդյանին մեծապես հետաքրքրում էր ժողովուրդն իր առօրյա հոգսերով ու սովորություններով, և նրա մեջ արթնանում է սեր ու հետաքրքրություն դեպի ժողովրդական բանահյուսությունը: Օտարազգիների նախատիրքը այն մասին, թե իբր հայերը զուրկ են բանաստեղծական զգացմունքից, որովհետև չունեն դրի առած իրենց ազգային երգերը, որոնք վկաները պետք է լինեն հայի բանաստեղծական ոգուն, վերավերել էին Ախվերդյանի ազգային արժանապատվությունը: «Մինչև օրս էլ չեմ տեսել մեկ աղբ, որն որ չունենա խաղ ու երգեր. թե ուրախ և թե տխուր վիճակում՝ ազգն կարո՞ւ է

խաղին, ու մեզ վրա շենք կարող ասել գերմանացվոց քերթողի խոսքն՝ չար մարդիկ երգ չունեն»:

Ժողովրդական երգեր հավաքելու և այն հրաաարակելու միտքը հանգիստ չի տալիս Ախվերդյանին: Իր ցանկությունների ու մտահղացումների մասին նա գրում է 1850 թ. մարտի 6-ին Մոսկվա, էմինին՝ «...նս քեզ արդեն ծանոթացրել եմ Սայաթ-Նովայի հետ, հիմա ուղարկում եմ քեզ Թիֆլիսի քաղաքացի Բաղդասարի մի աղոթքը, որը ապրել է Հերակլ II թագավորի օրով, մի քանիսը ենթադրում են, որ այդ աղոթքը պատկանում է Բաղդասար Ղազոյանին, ամեն տեսակետից սրանչևի մի մարդու: Այդ աղոթքը հիշեցնում է աբբաթ Լամենի աղոթքը: Որքան շուտ այնքան լավ, սպասում եմ քո կարծիքին և քո գնահատականին՝ այդ երգերի մասին: Ի դեպ, բարեկամս, ինձ մոտ հավարվել է տնվանի քամանչիստ Սայաթ-Նովայի 45 կամ 50 երգերը և ցանկանում եմ հրատարակել մեծ պատին, — նա գրել է Թիֆլիսի բարբառով, նրա երգերում այնքան տեղական կոլորիտ կա, որ սքանչելի է: Այդ հրատարակությունը սաստիկ է զբաղեցնում ինձ, նամանավանդ որ Սայաթ-Նովայից հետո ես ուղում եմ ընթացք տալ Ադամ-Աղբարին, Թուրինջին և մյուսներին»:

Իր հավաքած նյութերից Ախվերդյանին հրապարակում են աշուղները: Ախվերդյանի ջանքերով հավաքվում է Կովկասում ապրող հայ, թուրք, վրացի աշուղների ու խաղասողների գրավոր ու բանավոր բազմաթիվ տաղերն ու խաղերը:

Բացի պատմական արժեք ներկայացնող նյութերից, աշուղական ու ժողովրդական տաղերի մեծ հավաքածու է ստեղծվում նրա մոտ. բազմաթիվ աշուղներից՝ Սայաթ-Նովա, Ադամ-Աղբար, Թուրինջ, Քիչիկ-Նովա, Ավան-օղլան, Ղազոյանց-Բաղդասար, Շամչի-Մելքո, Որսուգ-օղլան, Շախմաչի-Ֆաղուր, Քեշիշ-Նովա, Գյուրջի-օղլի, Ջահել-օղլան, Միսկին-Բուրջի, Արաղլու, Կյուրջի-Նավե, Նարգիզ, Շիրին, Նալբանդ-օղլան, Ղարիբ-օղլան և շատ ու շատ ուրիշներ: Գավառներից ու Վրաստանի քաղաքներից անձամբ կամ փոստով տասնյակ աշուղական երգեր ու դավթարներ են հասել Ախվերդյանի ձեռքը: Հում նյութը մշակելու, լեզվական սխալները ուղղելու, ծուղումում հանգերը կարգավորելու համար նա ստիպված է լինում ուսումնասիրել հայ բարբառները, նրա ոճական դարձվածքները ու մայրենի լեզվի քերականությունը:

Հայտնի է, որ անցյալ դարի 50-ական թվականների ամենաակտիվ հարցը հայ աշխարհիկ լեզվի շինարարության հարցն էր: Ախվերդյանը լիովին գիտակցում է գրաբարի ոչ ժողովրդա-

կան բնույթը, և այն, որ գրաբար լեզվի պատճառով մեռել է ժողովրդի մեջ կենդանի հետաքրքրությունը դեպի գիրն ու գրականությունը: Նա մի կողմ է թողնում գրաբարը և սկսում է ուսումնասիրել արարատյան (Երևանի), Ղարաբաղի, Թիֆլիսի բարբառները: Մուշի, Տարոնի, Վանի բարբառները Ախվերդյանը ուսումնասիրել էր Թիֆլիսում եղած պանգուխտները միջոցով: Ախվերդյանի ձեռագրերի մեջ պահվող թերթիկները, սեագրությունները ցույց են տալիս, թե ինչպիսի քանասիրություն է ուսումնասիրել նա հայ ժողովրդական խոսակցական լեզուն և ինչպես է օգտվել նրա հարուստ բառապաշարից:

Ախվերդյանի արխիվում պահվող աշուղական տաղերի ու մուսամմազների դավթարներից մեկը գրված է հայատառ թուրքերենով և հայերեն: Այդ դավթարի երրորդ էջը նկարագրված է ակվարելով: Կարելի է ենթադրել, որ այդ դավթարը գրվել է Ախվերդյանից ոչ շատ առաջ, հավանաբար XIX դարի առաջին կեսին: Այդ դավթարում հայերեն լեզվով գրված մուսամմազներից մի երկուսը տպագրվել է Ախվերդյանի դուստր՝ Մանե Ախվերդյանի հրատարակած «Հայ աշուղներում», 1903 թվականին, մնացած ստեղծագործությունները կարիր ունեն ուսումնասիրման և վերլուծման:

Ախվերդյանը պատրաստվում էր հրատարակել աշուղական տաղերը, երբ հայտնագործվում է անմահ Սայաթ-Նովայի դավթարը: Շուտով այդ հազվագյուտ գանձը անցնում է Ախվերդյանի ձեռքը: Սայաթ-Նովան գերում է Ախվերդյանին իր բանաստեղծական մեծ շնչով ու մինչև այդ չլսված ազգային կոլորիտով գրված երգերով: Ախվերդյանը անորոշ ժամանակով հետաձգում է հայ մյուս աշուղների հրատարակության գործը և զբաղվում միայն Սայաթ-Նովայի երգերի հրատարակությամբ:

Պարտի գիտակցության մեծ հաճույք է ապրում նա միջնադարյան քնարերգության վերջին ներկայացուցչի՝ հանճարեղ Սայաթ-Նովայի ստեղծագործությունների հրատարակությունը պատրաստելիս:

Ախվերդյանի ստեղծագործական լարերատրիան, նրա սեագրությունները և ընդհանրապես այդ ուղղությամբ կատարած բարենիդձ աշխատանքները վկայում են նրա տաղանդի ու դեպի բանասիրությունն ունեցած հետաքրքրությունների մասին: Մեծ ճիգ ու ջանք է թափել նա կարդալու համար դավթարի գծվար ընթերցելի վրացատառ հայերեն, հայատառ թուրքերեն, վրացերեն գրված տաղերը: Երեք տարի տևող քրտնաջան աշխատանք է թափում Ախվերդյանը Սայաթ-Նովայի վրա, գրում նրա համար ընդարձակ առաջաբան, «Թիֆլիսի բար-

բառի մե քանի հատկություններու վրա» ընդարձակ ուսումնասիրությունը, ծանոթագրում յուրաքանչյուր երգ. հազմում անհասկանալի բաների բացատրան։ Մոսկվայում, 1852 թվականին, Ախվերդյանի մոտ ընկեր ու բարեկամ, հայագետ ու լեզվաբան Մկրտիչ Էմինի օժանդակությամբ տպագրվում է Սայաթ-Նովայի երգերի անդրանիկ ժողովածուն. որը մեծ ուրախություն է պատճառում ոչ միայն հրատարակչին, այլև բովանդակ հայություն։

Ախվերդյանի գրական ժառանգության մի մասը կազմում են նրա գրած և ստացած նամակները, որոնք մեծ մասամբ գրված են ռուսերեն։ Այդ նամակները գրված են զեղազետի մեծ շնչով և ունեն ոչ միայն կենսագրական նշանակություն, այլև բացահայտում են իր ժամանակաշրջանի շատ կարևոր հարցեր՝ կապված գիտության, արվեստի, գրականության, հայ մշակույթի, եկեղեցու հետ։ Այդ նամակներում կան բազմաթիվ քերթ ու անկեղծ արտահայտություններ՝ ուղղված իր ժողովրդին, հայրենասիրական զգացմունքներ, հայրենի երկրի կարոտ։ 1840 թվականի մայիսի 26-ին Նավթուղից Էմինին ուղղած նամակը, որը Ախվերդյանը գրել է օրագրի ձևով, պարունակում է Վրաստանի չքնաղ բնության նկարագիրը, այնտեղ ապրող բազմազգ ժողովուրդների կյանքն իրենց ազգային կոլորիտով ու ավանդություններով։ Այդ նամակում կան բազմաթիվ հիշատակումներ Շամխորի հարթավայրում Բեհրուժովի ու Պասկևիչի՝ պարսիկների դեմ մղած ճակատամարտի, ինչպես և տեղեկություններ ժամանակակիցների վկայությունների մասին։ Ինչպես կովկասագիտության, այնպես էլ ազգագրական արժեք ներկայացնող տեղեկություններ կան Վրաստանի տերիտորիայում ապրող բազմազգ ժողովուրդների, բրդերի, թուրքերի, հայերի կյանքի ու կենցաղի, սովորությունների, նրանց հագուստի ու ապրելակերպի մասին։

Էմինյով իր ժամանակի ամենակրթված ու բազմակողմանիորեն զարգացած հայ մտավորականներից մեկը, Ախվերդյանը մոտ հարաբերությունների ու նամակագրական կապերի մեջ էր ռուս, հայ, վրացի ու եվրոպացի շատ նշանավոր հասարակական ու պետական գործիչների, գրողների հետ։ Նամակներից պարզվում է, որ Ախվերդյանը Մկրտիչ Էմինի միջոցով բարեկամական կապեր է հաստատել ֆրանսիացի մեծ գիտնականներ, հայագետ Լանգլուայի և Եյուլյորեի հետ և հայագիտական ու ազգագրական արժեք ներկայացնող ձեռագրեր ու տպագիր աշխատություններ է ուղարկել նրանց։ Ախվերդյանի միջոցով է, որ ֆրանսիացի գիտնականները ծանոթանում են Սայաթ-Նովայի

անգուգական ստեղծագործությունների հետ։ Նամակագրություն է ունեցել նաև ռուս գրող բանաստեղծ Յա. Պոլոնսկու հետ, որից զժբախտաբար ոչ մի նամակ չի հասել մեզ։ Ախվերդյանի միջոցով է, որ Պոլոնսկին ծանոթանում է Սայաթ-Նովայի ստեղծագործություններին և սիրով թարգմանում նրա չորս խաղը։ «Кавказ» (1853, № 10—11) լրագրում Պոլոնսկու՝ Սայաթ-Նովայի մասին գրած ներածական հոդվածը և 4 խաղի թարգմանությունը մեծ հետաքրքրություն առաջ բերեց ռուս հասարակության մեջ։

Ախվերդյանի արխիվում կան բազմաթիվ նամակներ ուղղված նրան ռուս, հայ և եվրոպացի շատ նշանավոր հասարակական ու պետական գործիչներից, գրողներից։ Այդ նամակներում բացահայտվում է 40—60-ական թվականներին հասարակական կյանքում տեղի ունեցած երկվույթներն ու իրադարձությունները։

Ուշադրով է նաև այն, որ Լորիս Մելիքովը Ղրիմի կամպանիայի ժամանակ (1855) Կարսում մի թուրք գինավորից վերցրած թանկարժեք գիրքը հատուկ մարդու միջոցով նվեր է ուղարկել Ախվերդյանին։ Գրքասիրությունը Լորիս Մելիքովը ձեռք է բերել Ախվերդյանի շնորհիվ։

Ախվերդյանը նամակագրական կապերի մեջ էր եղբայրներ Պետրոս և Նիկողայ Շանշյանների, հայ անվանի նկարիչ Ստ. Ներսիսյանի, Մ. Էմինի և ժամանակի շատ անվանի ու նշանավոր մարդկանց հետ։ Աղայանը, որ Ախվերդյանի հետ ծանոթացել է Զ. Էնֆիաճյանի միջոցով, հիացմունքով է արտահայտվել նրա մարդկային արժանիքների, փայլուն բնգունակությունների մասին։

Չնայած այն հանգամանքին, որ Պետերբուրգում Ախվերդյանը իր աշխատած տարիներին վաշխում էր ռազմական միևնույնի համակրանքը, արժանացել էր կայսեր ուշադրության, բարձր շրջաններում փայլում էր իր արտակարգ խելքի ու մտքի հարստությամբ, այդ ամենը չէր գոհացնում նրան։ Հայրենի երկրի ու ժողովրդի կարոտ էր զգում նա իր հոգում և ի սրտե ցանկանում էր տուն վերադառնալ։

Ախվերդյանը զբաղվել է նաև պատմագիտության հարցերով, հայ պատմիչներից ամենից շատ խորենացին է հետաքրքրել նրան։ Այս տեսակետից հետաքրքրական է Ախվերդյանի կարծիքը Մ. Էմինի «Վեպր հնոյն Հայաստանի» աշխատության մասին, որը նա գրել է 1840 թվականին և լույս ընծայել 10 տարի հետո՝ 1850 թվականին։ Քննել ստացա թո հետազոտությունը մեր վեպերի մասին,—գրում է Ախվերդյանը Էմինին (1850),—և զուգարդ էս երեկայել իմ ուրախությունը, երբ ձեռքս առա թո գիրքը, սկզբից

մինչև վերջը այն հարուստ է ճշգրիտ ու կուռ եզրակացություններով, երբեմն կռահումներով, որոնք բնորոշ են բոլոր քննադատական և սուր հայացքին. առայժմ, քեզ ոչինչ ասել չեմ կարող, որպես այդ առարկային ծանոթ անձնավորություն, որովհետև, բավական չէ միայն կարդալ, այլ անհրաժեշտ է վերստին կարդալ այն, և ապա նոր խոսել քեզ հետ: Բայց համենայն դեպս կարող եմ համարձակ ասել քեզ, քարեկամս, որ այդ աշխատությունը թեկուզ փոքր, սակայն մեծ պատիվ է բերում քեզ, և դնում է քո իսկ հայտնագործած դպրոցի գլուխ: Ինչու շատերին մարտի կհրավիրես, այն էլ արյունալի մարտի: Ես լավ գիտեմ մերոնց: Ծնողն արդեն բացված է, ձեր գեներալի շաշունների կայծերը կլուսավորեն այդ պատկառելի բազմաշարքարի գեմբը, որը մերոնց համար նույնպես անհասկանալի է, ինչպես՝ Շամիրամուկերտի արձանագրությունները, այնպես մոթ՝ ինչպես Արարատի խոր վիրապները: Ես որքան կուզեի խորհնացին մյուս կողմերով էլ վերլուծվիր ու հասկացվեր: Որքան ավելի եմ կարդում, այնքան ավելի մեծ զարմանք է պատճառում ինձ նրա անսպասելի հարստությունը»:

Ախվերդյանի պատերազմական նամակներից երևում է, որ նա շատ ավելի մոտ է եղել հողի աշխատավորներին, քան պալատական ազնվականություն: Որպես բժիշկ նա բազմաթիվ անգամներ է հրավիրվել ազարակներն ու կավածները՝ բուժելու ճորտ իրավագուրկ գյուղացիներին: Շփումը ելիզավետինյոյի շրջակայքում ապրող գյուղացիների հետ պատճառ է դառնում էլ ավելի մոտիկից ծանոթանալու այդ պարզ, հյուրասեր ու բարեսիրտ, իրենց դառը քրտինքով ապրող մարդկանց, որոնց մասին այնպես հաճախ և կարեկցաբար գրում է իր նամակներում:

Ախվերդյանի՝ 1843 թվականին Պետերբուրգից գրած նամակում կարդում ենք. «Համենայն դեպս այստեղ սիրում են ինձ և փորձված ու բարերար բժշկի համբավովս լցվել է ամբողջ քսան վերստ տարածությունը՝ ելիզավետինյոյի մերձակայքը: Ամեն առավոտ իմ տան մուտքը բռնված է հիվանդներով: Մեր բակում ամբողջ օրը լսվում է. «Որտեղ է հապա մեր Յուրի Ֆեդորովիչը»: Ուր էլ կանչեն, երբ էլ կանչեն՝ միշտ պատրաստ է ամեն մի տառապյալի կանչին: Եւ Ախվերդյանը, և ինչով ասես, որ ճանապարհ չեմ գնում հինգ, ութ, տասը վերստ տարածություն: Իսկ այն հիվանդներին, որոնք ապրում են մեր հարևանությամբ՝ նկայի շրջակայքում գտնվող գյուղերում՝ սովորաբար համարյա ամեն օր այցելություն եմ գնում մակույկով՝ անտես առնելով անձրևն ու քամին, և բարի

զեղչուկները տեսնելով իմ ճիգերը հանդիպակաց րամու ժամանակ և երեսիս քրտինքը՝ առատուրեն շռայլում էին ինձ իրենց օրհնությունները: Ահա, ավելի մեծ պարգև ո՞ւր կգտնեմ ես: Եվ դրանք բոլորն էլ ինձանից թե բուժումը, և թե դեղորայքը ստանում են ձերի շնք սրանց օգնություն ցույց տալու մեջ եմ ես գտնում իմ վարձատրությունը»:

Ախվերդյանը կյանքից կտրված սոսկ մտավորական չէր: Նա յուրովի էր ապրում հայ ժողովրդի հակառակորդ: Էմինին գրած նամակում կարդում ենք. «...Ինչով կվերջանա մեր վիճակը: Ահա մի քանի հարյուրամյակ է, դիպվածով թե հակառակորդ ցրված երկրի երեսով մեկ թափառում ենք առանց հանդիմանի, չփախալված հյուրասիրությամբ, սպասելով անարգանքի ու խաղաղակություն: Իմ կարծիքով՝ անախանձելի է աստծո սիրած ժողովրդի վիճակը»:

Հապարյան ձեռնարանում պաշտոնավարելու տարիներին վատ փոխհարաբերություն էր ստեղծվել ձեռնարանի հիմնադիրների և էմինի միջև: Գործն հասնում է այնտեղ, որ էմինը որոշում է թողնել ձեռնարանը և տեղափոխվել Թիֆլիս: Բարկացած Հապարյանների գեմ էմինը սկսում է դժգոհել ոչ միայն Մոսկվայի հայերից, այլև՝ ողջ ժողովրդից: Ախվերդյանը, որ նամակագրական կապերի մեջ էր էմինի հետ, և շատ հաճախ էր լսում վրդովված բնկերոջ գանգառները, արդարացի կերպով կշտամբում էր էմինին և գտնում, որ ազգը ոչ մի հանցանք չունի այդ գործում, անհատների վատ արարքները չպետք է բնդհանրացնել և վերագրել ողջ ժողովրդին: Ահա թե ինչ է գրում նա (1852, օգոստոս, 2). «Բայց համենայն դեպս մի մեղադրի հայերին, այլ մեղադրի միմիայն մի քանի սոգետների, որոնց մոթ գլուխների մեջ չեն մտնում լուսավոր մտքեր: Որքան ես կարողացա ուսումնասիրել իմ հայրենակիցների բնավորությունները, դա խիզախ ժողովուրդ է, նրանց անհանգիստ բնավորությունը ծարավ է գործունեության: Հային անհրաժեշտ է գործել, լավ թե վատ, նա ամեն ինչ անում է և կարող է պատահել, որ ոչ մի ազգ այնքան կրթության ու դաստիարակության կարիք չունի, ինչպես հայը, որի համար անգործունեությունը հավասար է մահվան: Եվ այն պատճառով տգիտությունը նրանց ձեռքում մինա է... նրա գործունեությունը միշտ նպատակասլաց պետք է լինի և ղեկավարվի խիստ սկզբունքով. այդ ազգը կրում է իր մեջ բարոյական զարգացման սաղմը: Նայի շուրջը և կհավատաս ինձ: Եվ այդ պատճառով մի մեղադրի հայերին, այլ մեղադրիր նրանց, ովքեր իրոք մեղավոր են՝ դրանք զգվելի մարդիկ են, որոնց ոչ ոք սիրելի չի կարող, նրանց

միայն կարելի է խղճալ. բայց վրեժ երբեք չլուծեի»:

Մեծ են և ղեկ Ախվերդյանի հետաքրքրությունների շրջանակները: Սերն ու հետաքրքրությունը դեպի արվեստն ու գրականությունը նրա մեջ զրսեորվել էին դեռևս վաղ հասակից: Լինելով բազմակողմանիորեն զարգացած ու կրթված անձնավորություն, նա միշտ էլ հետաքրքրվում էր Պետերբուրգի հասարակական ու կուլտուրական կյանքով, գրականության ու արվեստի նորություններով: Ախվերդյանի՝ Պետերբուրգում ապրած տարիներին հասարակական ու գրական շրջաններին հետաքրքրող նորությունը Գոգոլի «Մեռած հոգիները» պոեմն էր, որ լույս տեսավ 1842 թ. մայիսի 24-ին Մոսկվայում: Այդ գրքի շուրջը առաջացել էին հակասական շատ բուռն կարծիքներ՝ թերևս դեմ: Որոշ ռեակցիոն գրչականեր փորձեցին նսեմացնել պոեմի արժանիքները և հարձակումներ գործեցին նրա հեղինակի դեմ: Հայ հասարակական մտքի զարգացման պատմության մեջ Ախվերդյանը առաջինն էր, որ ճշմարտացի խոսք ասաց «Մեռած հոգիներին»

մասին և մեծ ստեղծագործության հեղինակին դեռևս նրա կենդանության օրոք համարեց առև գրողներից ամենից խելոքը:

«Ասա խնդրեմ,— գրում է նա էմինին Պետերբուրգից 1842 թվականին գրած նամակում,— ինչու համար են հայհոյում այդ խելոք Գոգոլին. որը գերազանցեց բոլոր ուսու գրողներին: Ընչո՞ւ է, վերջին երկի մեջ ո՞նց անհարթ է, ոչ սահուն. բայց դրա փոխարեն, աշխույժ է, իսկ որքան ստեղծագործություն կա նրանում: Խարակտերները տրված են մեծ թափով, խիզախ ձևերով. այնպես որ դու չես կարողանա ոչ ավելացնել և ոչ էլ պակասեցնել: Նրա երկի հիման վրա կարելի է տալ ուսու ժողովրդի բնութագիրը, որը նա ինքը նույնպես պատկերավորել է»:

Ախվերդյանին հետաքրքրել են և հուզել համաշխարհային երաժշտության մեծ կորիֆեյները: Ուշագրավ է նրա՝ Բեթհովենի և Մոցարտի սիմֆոնիաներից ստացած աննախընթաց և խոր տպավորությունները, որոնք ուղեկցել են նրան ողջ կյանքում:

ԱՐՓԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ